



ԲԱՐԻ ԱՐԱԳԻԼ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏՆԿԱԾ ՏՆՋՐԻ ԾԱՌԸ ԿԱՆԳՈՒՆ ԿԸ ՄԱՅ

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտեն 37 քմ. հիւսիս, Սխտորաշէն գիւղի մօտակայքին, իր ամուր արմատներով կանգուն կը մնայ հսկայ սօսին՝ Տնջրին, 54 մետր բարձրութեամբ ու 27 մետր շառաւիղով:

Ծառը տնկած է Տիգրան Մեծ, եւս 15 նահանգներու մէջ ան տնկած է ծառեր, որոնք չորցած կամ չեն դիմացած ժամանակի փորձութիւններուն:

Ծառը ուխտատեղի է ոչ միայն արցախցիներու, այլեւ աշխարհի տարբեր անկիւններու մէջ գտնուող հայ եւ օտարերկրեայ զբօսաշրջիկներու համար: Ծառին մօտ կը բխի սառնորակ աղբիւր, որ դարեր շարունակ ջրած է ծառը:

Ծառը կը համարուի աշխարհի ամենատարեց ծառերէն մէկը, որ իր փչակի մէջ 100 մարդ հիւրընկալելու տեղ ունի:

Դժբախտաբար ներկայիս Տնջրի ծառին վրայ կան մարդոց փորագրութիւններ, որոնց հետեւանքով վնասուած են ծառին ճիւղերը: Ծառերը ծառին փչակին մէջ մոմեր վառած են, որուն հետեւանքով հրդեհներ յառաջացած են:

Պարտաւոր ենք խնամքով ու հոգատարութեամբ վերաբերիլ որեւէ մշակութային արժեքի հետ:



Աշխարհի մէջ կայ արագիլի 17 տեսակ: Հայաստանի մէջ տարածուած է ճերմակ արագիլը:

Ճերմակ արագիլը մարդոցմէ չի վախնար եւ բոյնը կը հիւսէ գիւղերուն մօտիկ բարձր ծառերու կատարներուն, սիւներուն եւ գիւղական տուներու կտուրներուն: «Հիւսողը» մայր արագիլն է, իսկ «շինանիւթը» կը կրեն երկուքը՝ հայրն ու մայրը, որոնք իրարու հաւատարիմ կը մնան մինչեւ իրենց կեանքի վերջը:

Ապրիլին արագիլը 3-7 հաւկիթ կ'ածէ, 30-32 օր թուխս կը նստի: Աշնան արագիլները կը չուեն տաք երկիրներ, գարնան՝ կը վերադառնան իրենց նախկին բոյները: Արագիլները կը սիրեն բնակիլ ջրառատ վայրերու մէջ:

Արագիլները շատ տարածուած են Հոլանտայի եւ Իսլանտայի մէջ, իսկ օրինակ Անգլիոյ մէջ արագիլ չկայ:

Կը սնանին ձուկերով, սողուններով, կրծողներով, բուսական կերով:

Ճերմակ արագիլի մարմնի երկարութիւնը՝ գլուխէն մինչեւ պոչ 76-152 սմ. է, հասակը կեցած վիճակի մէջ՝ մօտ 1 մետր է: Ունի երկար, ուղիղ կամ քիչ մը կեռ կտուց, լայն թեւեր: Երկար կ'ապրի:

Արագիլներու ձայնալարերը զարգացած չեն, անոնք գրեթէ ձայն չեն հաներ, կտուցով կը կափկափեն:

Արագիլը սիրուած թռչուն է մարդոց կողմէ, կ'ըսուի որ ան բարութիւն եւ յաջողութիւն կը բերէ:

Բազմաթիւ երգեր, առակներ եւ բանաստեղծութիւններ գրուած են արագիլներուն:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՌԵԱՆ-ՏԻՐՊՈՒՔԵԱՆ ՆԿԱՐԱՉԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՇԵԱՆ

ԵՐԲ ԹԱԳԱՒՈՐԸ ԿԸ ԲՆԱՆԱՅ

Գիւղացի մը սայլը բարձած, ամբողջ գիշերը կը քշէ: Առտուան կողմը, երբ քունը կու գայ, եզները սայլէն կ'արձակէ, որպէսզի արածին, իսկ ինք, սայլին յենելով կը քնանայ: Քունէն կշտանալէն յետոյ կ'արթննայ ու կը տեսնէ, թէ եզները չկան: Հոս-հոն կ'իյնայ, բայց զանոնք չի գտներ: Նեղուած կ'ելլէ կ'երթայ թագաւորին քով ու կ'ըսէ:


- Թագաւորը շատ ապրի, եզներս տո՛ւր:
- Ի՞նչ եզներ, ո՛վ մարդ, որո՞նք եզները տամ:
- Իմիններս: Եզներս գողցած են:
- Մէյ մը պատմէ տեսնեմ, թէ ինչպէ՛ս պատահած է:
- Թագաւորը շատ ապրի: Ամբողջ գիշերը քշեցի, բայց լուսադեմին քունս եկաւ: Եզներս արձակեցի, որպէսզի քիչ մը քնանամ ու հանգստանամ: Արթննալով՝ տեսայ, թէ եզներս չկան: Ես ալ ելայ եկայ եզներս քեզմէ ուզելու:
- Տունդ շէն մնայ: Դուն հանգիստ կերպով քնացեր մնացեր ես, հիմա ալ եկեր եզներդ ինձմէ՛ կ'ուզես:
- Թագաւորը շատ ապրի,- կ'ըսէ գիւղացին: Կը խորիէի թէ երկրիս տերն ու տիրակաւը արթուն է, ատոր համար ալ հանգիստ կերպով քնացայ: Եթէ գիտնայի, որ ան քնացած է, ես հաստատապէս չէի քնանար ու եզներս չէին գողնար:
- Թագաւորը այս խօսքերէն անակնկալի կու գայ եւ զայրացած, կը կանչէ իր իշխանները ու կը հրամայէ՝ ուրկէ ալ ըլլայ, թէկուզ գետնին տակէն, գողերը գտնեն ու եզները տիրոջ տան:
- Թագաւորի հրաման էր: Գողերը կը բռնեն, կը պատժեն եզներն ալ գիւղացին կու տան:
- Թագաւորը շատ ապրի: Ահա՛, ասկէ ետք ո՛վ ալ տեսնեմ, պիտի ըսեմ՝ դուք հանգիստ եւ ապահով կերպով քնացեք, մեր թագաւորը արթուն է,- կ'ըսէ գիւղացին, եզները առջեւը կը ձգէ ու ճամբայ կ'իյնայ դէպի տուն:



ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԽԱՉԲԱՐ

Հետեւեալ անուանները եղած են հայ թագաւորներու անուաններ: Փորձեցէ՛ք զանոնք տեղադրել ստորեւ տրուած խաչբառին մէջ:

- Արտաւազդ
- Արտաշէս
- Տրդատ
- Տիգրան
- Աշոտ
- Սմբատ
- Լեւոն
- Արշակ
- Խոսրով



Կը սիրե՞ս թուաբանութիւնը: Գծիկներուն վրայ գրէ ճիշդ թիւը:

- 35 x = 105
- 88 / = 8
- 2 + 5 + = 10
- 35 - + 8 = 33
- 100 / = 1
- x 8 = 200
- 37 x = 222
- 5 x = 35

ՀԱՆԵԼՈՒԿ

- 1.- Ի՞նչ է այն, որ հարցում չի հարցներ, բայց պատասխանի կը սպասէ:
(զանգ կամ հեռաձայն)
- 2.- Ի՞նչ է այն, որ միշտ կ'աւելնայ, բայց բնաւ չի պակասիր:
(տարիք)
- 3.- Ի՞նչ է այն, զոր կրնաս կոտորել առանց իրեն դաչելու:
(խոստում)

ՕՐ ՄԸ՝ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅԻՆ ՅԵՏ Սիրական Յապիպ

Այդ օր շատ ուրախ արթնցած էր Տիգրանիկ: Դաս-դասաւանդութիւն չկար: Դասարանով պիտի այցելէին Յալէպի շքեղ բերդը: Յապ-ճեպով պատրաստուեցաւ եւ վազելով դպրոց հասաւ:

Յանրակառքին մէջ ուրախութիւնը անսահման էր՝ երգեր, կան-չեր, ծափեր ու ծիծաղ: Վերջապէս, Տիգրանիկ իր սեփական աչքե-րով պիտի տեսներ շատոնց երագած Յալէպի պատմական բերդը, այն բերդը, որուն մասին շատ պատմած էր պատմութեան ուսուց-չուիին:

Յիմա բերդի պարիսպները ձեռք-ձեռքի բռնած կը խոյանային ու կը պատմէին հզօր թագաւորներու եւ իշխաններու քաջագործութիւն-ները: Ներսը՝ բերդին մէջ, արաբ ուղեցոյցը շատ յստակ բացատրու-թիւններ կու տար իւրաքանչիւր դահլիճի, սենեակի ու դամբարանի մասին: Նոյնիսկ շքեղ բաղնիքը անմասն չէր մնացած ուղեցոյցի բա-ցատրութենէն: Տիգրանիկ արդէն կը պատկերացներ բերդին փառքի օրերը: Պատմական դէմքեր կը շրջէին Տիգրանիկի երեւակայութեան մէջ:

Ուղեցոյցը կանգ կ'առնէ միջանցքի մը մէջ ու կը հարցնէ..

- Սիրելի՛ փոքրիկներ, դուք հայ էք չէ՞, ձեզմէ ո՞վ տիգրանակերտ-ցի է:

Պճիկ մատիկներ կը բարձրանան, մինչ Տիգրանիկին աչուկները

մատիկին հետ կը շողան:

- Դուք գիտէ՞ք, թէ այս միջանցքը ո՛ւր կը տանի:

Աշակերտները շուարած իրարու կը նային.

- Այս միջանցքը կը տանի ուղղակի քաղաքին կեդրոնը, հոսկէ իր հզօր բանակով անցած է ձեր արքայից արքայ՝ Մեծն Տիգրանը, որ հասաւ մին-չէւ Միջագետք:

Յանկարծ Տիգրանիկ գլխապտոյտ մը կ'ունենայ, աչքերը կը մթազ-նին, կամաց-կամաց գլուխը կը յենէ խորտուբորտ սալերէ շինուած պա-տին ու սալը ներս կը քաշէ զինք, Տիգրանիկ ուշաթափ կ'իյնայ:

Քանի մը վայրկեան ետք, երբեք աչքերը կը բանայ՝ խումբ մը ձիաւոր-ներով շրջապատուած կը գտնէ ինքզինք.

- Լաօ՛, վո՛վ իս իւրկի՞ կի գաս,- կը հարցնէ զօրապետը գուրգուրան-քով:

(Շարունակելի)



ՄԱՐԶԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԵՆ

* Պրագիլցի մարզիկ Արթուր Ֆրետերիք իր ֆութպոլի մրցումներուն ընթացքին արձանագրած է 1329 կոլ: Ան աշխարհի ամենն շատ կոլ նշանակած մարզիկն է:

* Ընդամենը միայն 8 երկիրներ ֆութպոլի աշխարհի բաժակին տիրացած են

* 1937-ին անգլիական Չելսի եւ Չարլթոն խումբերուն միջեւ մրցումը ընդհատուեցաւ 60-րդ վայրկեանին, մշուշի պատճառով: Չարլթոնի խումբին բերդապահը դաշտին վրայ 20 վայրկեան աւելի մնաց, որովհետեւ ան չէր տեսած, որ միւս մազիկները դաշտը արդէն լքած էին:

* Պիպիանա Շթայնհաուս առաջին կին իրաւարարն է, որ մասնակցած է գերմանական ախոյեանութեան առաջին դասակարգի մրցումի մը: Ան իր առօրեայ կեանքին մէջ ոստիկան է:

* Յնդկաստանի ֆութպոլի խումբը հրաժարեցաւ մասնակցելէ 1950-ի ախոյեանութեան, որովհետեւ մարզիկները վարժուած էին բոպիկ ոտքով խաղալու, իսկ կազմակերպիչ յանձնախումբը անոնց կը ստիպէր կօշիկներ հագուիլ:

* 1998-ին անգլիացի իրաւարար մը ինքնիրեն կարմիր քարտ տուաւ եւ դաշտէն դուրս ելաւ մրցաշարքի մը ընթացքին դիտում-

նաւոր կերպով մարզիկ մը հրելուն պատճառով:

* Ֆութպոլի աշխարհի ախոյեանութեան առաջին բաժակը գողցուեցաւ 1966-ին, Լոնտոնի մէջ, Անգլիոյ մէջ տեղի ունենալիք ախոյեանութենէն անմիջապէս առաջ: Բարեբախտաբար բաժակը գրտնուեցաւ քանի մը օր ետք, ոստիկանական շան մը կողմէ, Լոնտոնի արուարձաններէն տան մը պարտեզին ցանկապատին մօտ լքուած:

* 2 դար առաջ ֆութպոլի գնդակները պանիրի կը նմանէին, անոնք կլորակ էին, բայց՝ տափակ:

* Ֆութպոլի առաջին մրցումներուն շապիկները հաստ բուրդէ էին եւ աւելի ձմեռնային հագուստներու կը նմանէին քան՝ թի-շըրթներու:

* Ֆութպոլի Աշխարհի ախոյեանութեան առաջին բաժակը, որ գողցուած էր 1966-ին եւ ետ գտնուած, նոյն բաժակը 1983-ին կրկին անգամ կորսուեցաւ Ռիօ տը Ժաներոյի մէջ, Պրագիլ: Այս անգամ ոստիկանութիւնը բաժակը չգտաւ, եւ պատասխանատուները ստիպուեցան բաժակը փոխարինելու...:

